*Հավելված N 1*
*ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/8-ԱԴԲՆԱ ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*
*2026թ.-ի հունիսի 19-ի N1.1 արձանագրության*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026թ.-ի հունիսի 19-ի N1.1 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

**Ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/8-ԱԴԲՆԱ**

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար անասնաբուժական դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/8-ԱԴԲՆԱ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 18.06.2026թ-ին ժամը 10:09:19-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 19.06.2026թ-ին տրամադրված պարզաբանումը՝

**Հարցադրում N1:** «Հարգելի գործընկերներ, Հայտնում ենք Ձեզ, որ «Ախտորոշման բժշկական հավաքածուներ» անվանմամբ, 2 լոտով պահանջված ապրանքը առկա է մեր պահեստում CanLiv 4 թեստի տեսքով, որը նախատեսված է լեյշմանիոզի, էրլիխիոզի, անապլազմոզի հակամարմինների և դիրոֆիլարիոզի (Dirofilaria immitis) հակագենի հայտնաբերման համար: Առկա քանակը՝ 30 թեստ, Պիտանելիության ժամկետը՝ 09/2026, Մեկ թեստի արժեքը՝ 5,950 ՀՀ դրամ: Ձեր կողմից նախատեսված բյուջեի շրջանակներում կարող ենք մատակարարել տվյալ ապրանքից 25 հատ քանակով: Խնդրում ենք հայտնել Ձեր համաձայնությունը կամ մերժումը նշված առաջարկի վերաբերյալ: Հարգանքով,»:

**Պարզաբանում N1:** Հարգելի մասնակից, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ կետի 22-րդ ենթակետի «հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/8-ԱԴԲՆԱ ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանին:

Հեռախոս՝ (+374) 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 08)
Էլ. փոստ՝ v.vardanyan@promotion.am
Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն